## 40. ԱՋՆԻՎ ՏՂԵՆ, ԹԵԼՄԱՆ ԵՎ ՏԱՃԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐՈՒ ԱԽՋԻԿՆԵՐ

*Շատ զանկին մարդըմ կէղնի ու ուրեն՝ մեկ տղա։ Տղեն օրըմ պապուն կասե.—Արո՛, մենք անհուն մալի ու թամալի տեր ինք։ Մեկըմ չկա օր շատաշվե զմզիկ։ Ես պիտի էրթամ օրբ տղեմ՝ բըռնիմ, առնիմ հ՚իգամ, էնիմ ընծիկ ախպեր։*

*Պապն կասե.—Լաո՛, ղու գինաս։*

*Կէլնի խուրճիմ՝ օսկի կառնե ուր հետ, կհեծնի զուր ձին ու կընկնի ճամբախ, կէրթա Իստանպոլ կէլնի դուրս։*

*Մեկ-էրկու օր էդ տեղ կըռհաթի. չէ՞ ժամանակին գերու մեյդան կեր։ Ադաթ կեր՝ բերեն գերի ծախեն։ Դըռ հմկա լէ կա էգ սովորութեն։ Կէլնի կէրթա էդ մեյդան, կթալե զուր աթոռք, կնստի ու կիշքե։ Շատ գերի կբերեն, կծախեն, մեկի չհավնի, կիշքե օր տղեմ՝ առան էկան։*

*Կասե՝ «էդա տղեն ու ես դու գինաս մեկ խընձոր ինք». հայլիմ՝ կճամբե կրերե, կիշքե զուր քիթ ու բերան ու զէգ տղին, կասե.—Իսկի ֆարդ չկա մըր մեշ։ Ես կորսվիմ՝ գինան էդա տղեն ես իմ։ Տղեն կորի՝ գինան ես տղեն իմ, էլ չարա չկա, ես զէդ տղեն պիտի առնիմ։*

*Հ՚էրկեն-կարճ, շատ-քիչ կիտա փարա, զտղեն կառնե, տղեն կգնի, կտանե համամլամիշ կիտա էնել, կթրաշե, ձեռքըմ լէ ուր հալվի պես հալավ կհագու, կառնե կիգա ուր հ՚օղեն։*

Կիգա ուր հ՝օդեն, ինչ գլխու ցավանք էնինք, ութ օր կմնա էդ քաղաք, իմալ օր ինք գինա զուր քաղքի թապիաթ ու զուր տան, մեկիկ-մեկիկ տղին կհասկցու։ Ութ օր վերջ էդ քաղքեն կէլնի կիգա կնստի կյամին, է մալում ա կյամին կիգա իսքյալեմ՝, կկանի, կէլնին դուրս, կօլորդին, կիգան ծովու պռուկրմ կնստին. կպառկին քնին։ Էդ տղեն օր գներ էր զէդ գերին, անուն Ազնիվ կէղնի։

Տղեն օր կքնի, գերին կասե.—Ջանը՛մ, ես զէդա հին ու ծին հ՝ուրնե աղեկ գինամ, ինք թարիֆ էրեց, իմ շրկրլու իմ հալավ լէ, էդոր շրկրլից ու հալվից չջոկվի, զիս պիտի տանե վաղ, գերու տեխ բանցու, էն օր տանե գերու տեխ բանցու զիս, կանի կէլնիմ կմորթիմ, թալիմ ծով, հարցում ֆրլան մարդուն տունն ու էրթամ, ո՞ր կճանչնա զիս։

Կէլնի կքաշե զդանակ ու գափի մարդու սրտին, եբ կչոքի սրտին, տղեն կիմնա։

Կասե.—Ախպեր, ի՞նչ կէնիս։

Գերին կասե.—Կսպանիմ զքզիկ։

— Ախպեր հ՝ո՞րի զէդ բան կէնիս, ես զքզիկ գնի տարա, օր մեկ տեխ ուտինք ու վայելինք, հ՝որի չկա՞։

Տղեն կասե.—Չէ՛, վալլա՛հի կսպանիմ, էն օր տանիս զիս գերի բանցուս, զքզիկ կսպանիմ, կէրթամ նստիմ ու վայելիմ։

Մարդն կասե.—Ախը՛ր զիս կսպանիս. կանի քզիկ բանըմ ասիմ, սորա սպանե։

Ուխտ կէնիմ քու հ՝առջև օր քանի սաղ իմ, չասիմ Ազնիվ տղեն ես իմ, հարցուն լէ՝ ասիմ գերի տղեն ես իմ, Ազնիվ տղեն էնա տղեն է։

Եբ օր ուխտ կէնե, կթորկե, էլ չսպանե, ինք կէղնի գերի տղի տեխ, գերի տղեն կէղնի Ազնիվ տղի տեխ։ Կիգան կնստին կյամին, կիգան ուրանց տուն կելնին դուրս։ Կիգան կնստին կյամին, կիգան ուրանց հ՝էրկիր, հիմաց կիտան թե՝ ֆրլան մարդու տղեն էկավ։ Հեր կէլնի կառնե զգոլ ու զուռնեն, կիգա տղի հ՝առեջ, կտանե կիջու, իկրամ ազաթ, կեր ու խում կէղնի քելխ։

Ազնիվ տղեն կասե գերի տղին.—Գերի տղա, դու գինա՞ս ինչ պիտի էնիս։

Գերի տղեն կասե.—Չէ՛, ես ի՞նչ գինամ։

Ազնիվ տղեն կասե.—Դու լուսուն պիտի հ՝էլնիս, թամքիս զքու ձին ու հեծնիս էրթաս ավջութենի, հ՝իրկուն դառնաս հ՝իգաս։

Գերի տղեն՝ կասե.—Թըղ էղնի, կէլնի լուսուն կէրթա նեճրութենի, Հ՝իրկուն կդառնա կիդա. ուր գործ էդ կէղնի։

Աղնիվ տղեն կասե օրըմ ուր պապուն.—Աբո՛, էդա քանի օր մինք չայ կիմինք, լիմոն չկա թալուկ մեջ, հ՝որի՞, ես գինամ, մըր քաղքի մեջ լիմոնի ծառ լէ կա։

Պապն կասե.—Լաո՛, գու օր գացիր Իստանպոլ, հ՝ուշապըմ փեյդա էղեր է լիմոնի ծառու տակ, որն օր կէրթա լիմոն կքաղե, կրերե, կկըլու, մարդ չիշխնա մոտենա ծառուն։

Տղեն կասե.—Աբո՛, էգի խոլայի բան է, իմ գերի ախպեր օր բերեր իմ, հույս ունիմ, թե կռնա էրթա սպանե հ՝ուշապն ու առնե լիմոն հ՝իդա։

Ըսահաղ, աչք տղի կորսնեցնելն է։

Հ՝իրկուն դերի ախպերն է, նեճրութենից կդառնա կիգա, Աղնիվ ախպեր կկանչե, կտանե, կասե.—Գերի ախպեր, էդա քանի օր է մըր չայի մեջ լիմոն չկա, կհարցում, կասին՝ հ՝ուշապըմ փեյդա էղեր ծառու տակ, չթողե մարդ մոտենա քաղե. լուսուն շուտ կէրթաս, զէն հ՝ուշապ կսպանիս, կառնիս քանի մը լիմոն, կիգաս։

Գերի տղեն կասե.—Թըղ էղնի, քու հրաման վըր գլխուս ու աչվիս։

Լուսուն շուտ կէլնի, կհեծնի զուր ձին ու կէրթա էդ տեխ օր լիմոնի ծառն էր։ Հեռուն կնստի ու կմտածե, քրպեն կիլա. «Ցա բապպի, էդ ի՞նչ էր ես բերի կապի իմ գլուխ»։

Քրպեն քուն կքաշե, կննշա, քնու մեջ կտեսնա հ՝երկեն, սպիտակ շորերով մարդըմ։ Թուր էձգուկ վիզ, կանուկ վըր գլխուն։

— Տղա՛, դու մեռնելու հաղար քիսա կաժիս։

Կասե.—Աման ինչ էնիմ. հեղըմ աստծու հ՝առջև ուխտ իս էրի, բան չըմ ասիմ, ճամբախըմ քղիկ պիտի ցուցում։

Կհանե գունդըմ խմոր կդնե տղի կուշտ ու կասե.—Տղա՛, հանդե կէրթաս, ծառուն կմոտենաս, կտեսնաս օր հ՝ուշապ զբերան բացեր է օր զքզիկ կըլու, զէդա խմոր կթալիս բերան, էլ ձեն չէնե, կմոտենաս ծառուն, հ՝ուզածիդ չափ լիմոն կքաղիս ու կդառնաս կիգաս։

Գերի տղեն կխրդի զարթի, կտեսնա օր օղորդ՝ գունդըմ խմոր դրուկ կշտի հետ, կէլնի, կառնե զխմոր, կհեծնի զուր ձին ու կքշե, կէրթա, կէրթա, կմոտենա ծառուն, կտեսնա օր հ՝ուշապ զբերան

---

[1] Իսկական Աղնիվ տղան, որն իր վրա է վերցրել գերությունը (Ս. Բ.)։

բացեր է, օր թալե զինք կըլու, հ՚ուշիկըմ զխմոր կթալե հ՚ուշապի բերան։ Հ՚ուշապ կուռի, կուռի ու կտրաքի։ Տղեն կքաղե բոլամա լիմոն, կլնա ուր խուրճին ու կառնե կդառնա կիգա։ Կբերե կտանե վի, դնե Աղնիվ տղի հ՚առեջ։

Աղնիվ տղեն օր կտեսնա զլիմոն, կվերցու կասե.—Արո՛, կտեսնաս իմալ գերի ախպերմ իմ բերի ընծիկ օր հ՚ուշապներու հետ հուն կէլնի։

Հերն կասե.—Աստված դըհա խվաթ իտա։

Լուսուն մեկ լէ կէլնի, կհեծնի զուր ձին կէրթա նեճրութենի, կէրթա, կէրթա, մնշիմ՚ հ՚ըռաստ կիգա։ Հեռվանց կտեսնա օր բանըմ փառլամիշ կէղնի, հըմալ փառլամիշ կէղնի օր արև ու լուս խանգար կէրևա ուր հ՚առեջ։

Կքիշե կէրթա վրեն, կտեսնա օր թեբուրըմ է։ Ինքն ուրին կմտածա, կասե. «Վերցում ղէդա թեբուր, տանիմ Աղնիվ տղին, բալքիմ իմ հետ քիչըմ անուշ խոսա, հերիք է զիս հըմլա տրորեն». կվերցու, կփաթի տասմըլի մեջ, կդնե ծոցք, բերե։

Հ՚իրկուն կդառնա կիգա տուն, զձին կտանե կապե, կէլնի կէրթա Աղնիվ տղի մոտ, կտեսնա օր հ՚օդեն նստուկ է։

Կէրթա հ՚օդեն, կտեսնա օր ճրագ վառեր ին, ղթեբուր կհանե ծոցուց, կբանա, կտեսնա օր ճրագ լուս չիտա էդոր հ՚առեջ, կասե. —Հըմլա բան լէ կէղնի։

Կառնե ձեռքեն, կդնե թարշրիկ։ Օր կդնե թարշրիկ, կդառնա գերի ախպոր վրեն, կասե.—Գերի ախպեր, զէդոր տեր քինե կուղիմ։

Գերի ախպեր կասե.—Ես գինա՞մ էդոր տեր հ՚ուր է, թեբուրըմ էր, թալուկ էր մեշի մեջ, վերցի, ասի՝ առնիմ էրթամ իտամ Աղնիվ տղին։

Աղնիվ տղեն կասե.—Չը՛մ ճանչնա, հ՚ուստե՞ն կէղնի, քղիկ մեկ տարի լէ մոֆուլ կիտամ, գտնաս, կառնիս կիգաս։

Տղեն զարհուր մնալով, կէլնի լուսուն կհեծնի զուր ձին ու զճամբախ կիտա հ՚առեջ։ Վերջապես թե տարիմ՚, թե էրկու կօլըրդի, սալըխըմ չկըռնա էնե։ Օրրմ կէրթա դաշտի մը մեջ, ծառում՚ տակ հ՚ըռաստ կիգա հ՚աղբրիմ, էլ զումուտ կկտրե, կուտե բըրդուճըմ հաց, կլվացվի, զձին կթողե չայիր ու ինք կպառկի քնի։ Կպառկի քնի, քնու մեջ կտեսնա օր մեկ լէ լիմոնի ծառու տկու սպիտակ շորերով մարդ թուրն ի վիզ, էկավ կանավ վըր գլխուն։ Կանավ վըր գլխուն ու զթուր կդդմեցու վրեն. «Հայ, մեռնելու ար-

Ժանի իս, աման ի՞նչ էնիմ, աստծու հ՚առջև ուխտ իմ էրի, ձեռք չվերցվի քու վրեն։ Ասա, քղիկ ո՞րն ասեց՝ գնա մեջի մեջեն թեքուր վերցու տար տուր ուրիշին օր քու յախեն բռնին, քինե զթեբրի տեր հ՚ուղին։ Հ՚էլի գնա, էդա տեխ մոտ քաղաքում կա, բռնե տաս, քսան բեռ կորեկ, բեր էդա ծառու տակ, փորե հորում, դու մտի հորու մեջ, ղկորեկներ լէ լից վրեդ։ Հանդե ես հրաման կէնիմ լուսուն բոլոր հավքորեսներուն կիգան ու մեկ-մեկ հատ կտանին, կմնա մինակ մեկ հատ կորեկ վըր քու պառեկին. կիգա հավքում կվերցու, օր կէրթա, գլուխդ կվերցուս վի, կասիս. «Նո տապանի խորոտիկ էղբվնիկ, հ՚ո՞ւր կէրթաս։ Էկո տանիմ զքզիկ օր կյանք վայելիս, էդ հավքերուց ի՞նչ կհասկնաս». կառնիս կէրթաս։

Լուսուն տղեն հ՚էլավ դեմ գնաց էդ քաղաք օր մարդն էր սալըխի, կառնե տաս-քսան բեռ կորեկ, կրերե էդ ծառու տակ, բաժկանց հորում կփորե, կմտնի մեջ ու ղկորեկ կըլնա վրեն։

Քիչում կմնա, կիշքե օր հ՚էրկինքի հ՚երես բռներ ին ու կիգան, ճրվճվուն ու վրժվրժուն վերուցեր է զաշխարհ։ Ամեն հավորիք մեկ հատ կտանե, էրկու անժամ կէղնի, կիշքե օր էլ կորեկ չմնաց ուր վրեն, ձեռք կտանե պառեկին, կիշքե՝ մեկ հատում է մանցի, մեկ լէ կպառկի, կտեսնա օր հավորիքում էկավ զէդ մեկ հատ լէ վերուց կէրթա։

Գլուխ կվերցու վի, կասե.—Է՜, Նո՜ տապանի խորոտիկ էղբվնիկ, ո՞ր կէրթաս, դարձի էկո տանիմ զքզիկ օր կյանք վայելիս։

Էղբվնիկ կկրվկրվա։ Կդառնա կիգա, կէլնի կվերցու զէղբվնիկ, կհեծնի զուր ձին ու յալա՜, հ՚ո՞ւր իս, Ազնիվ տղի քաղաք, էկա քի։

Կիգա, կիշնի ձիուց, կտանե զհավորիք թասլիմ կէնե Ազնիվ տղեն։

Ազնիվ տղեն կասե. «Զհավք դնե թարճրեք, հավք կխրբխրբա, լուս կիտա հ՚օդի մեջ, ինչ օր ղցերեկվան, բըլե տղի մարախ սըրտեն իսկի չէլնի։ Գիշեր ու ցերեկ մարախի մեջ է, իմա՞լ կէղնի էդ տղեն հ՚ուր օր ճամբի էկավ, իմա՞լ զէդոր կորցնելու ճար գըտնամ»։

Կկանչե շադուքար պառավըմ, կասե.—Նանե՜, գերի մը գնիր իմ բերի, հըմկա էլ չըմ կըռնա ձեռքեն ազատի։ Կուզիմ կորցում, ճամբախըմ չըմ կռնա գտնի, դու չկառնա՞ս ճամրախըմ հանիս։

Նանեն կասե.—Քզիկ լախա չկա, լուսուն ճամբախրմ կցուցում, օր էրթա, էլ չի գա։

— Դը՛, զքզիկ տեսնամ, նանե, օր հրմալ բան էնիս, զքզիկ օսկու հետ պիտի կշռիմ։

— Լաո՛,—ասեց նանեն,—լուսուն հ՚էլի, ասե քու գերուն, թըղ էրթա. Տաճկա թագավորի* քաղաք։ Փորձվի էնգոնց թագավորի հետ, առնե զէնդոր ախչիկ, հ՚իգա քզիկ. հանդե կէրթա ու չիգա. որն օր գացեր է էն հ՚էրկիր, էլ չէկեր է։

Հէլավ Աղնիվ տղեն լուսուն ու զգերի տղեն կանչեց, առավ էկավ։

Ասեց.—Գերի ախպեր, ես լսեր իմ Տաճկա թագավորին ախչիկըմ կա, որն օր գացեր է, չկառցեր է բերի, դու պետք է էրթաս, հաղթես էնդոր ու էնդոր ախչիկ առնես հ՚իգաս ընծիկ։

Տղեն ձեռք դրեց ծոցք ու սևավորավ մնաց.—Հե՛յ աստված, էդ ի՞նչ բալա էր ընկա ես։

Հ՚էլավ լուսուն հեծավ զուր ձին, զուր բար տվեց չոլ ու հ՚ընկավ չոլ ու չոլըստան։

Բուհարե հաթ Ջընըստան.
Հեյ սարե գելի քաթ,
Խախեքի գըրան**։

Գնաց թե մեկ, էրկու ավուր խոնախ շենլըկի հ՚ըռաստ չէկավ։ Իրեք օր վերջ, մոտեցավ քաղքիմ՚ ու զձին թորկեց, ասեց.—Ես էդա քաղքի մեշ ճանաչ չունիմ, վի՞ր դուռ էրթամ կանիմ։ Կանի զիմ ձիու դիզկին կթողիմ, հ՚ո՞ւր օր կանավ, հ՚ոնի մսաֆըր կէղնիմ։

Ձին գնաց պառվու մը դուռ կանավ, պոռաց.—Տան տեր, տան տե՛ր, դուրս հ՚էլի։

Պառավ դուրս հ՚էլավ, տեսավ օր, ձիավորըմ կանուկ է ուր դուռ։

Ասեց.—Կտրիճ, մեռնիմ գլխուդ, արևուդ, ի՞նչ կասիս։

— Նանե՛, նանե՛, խաբիր իմ, ճանաչ չունիմ, ես կխնդրեմ օր զիս հ՚էսօր սըթրիս քու տուն։

— Կտրիճ,—ասեց պառավ,—ես մըսաֆրից չըմ փախնի, բըլե տեխ չկա, հաց չկա, ամոթով կէղնիմ։

Տղեն ասեց.—Ջանըմ, էդի է, հոգ մ՚էնի, առ զքզիկ օսկիմ, հաց լէ բի, խոտ լէ բի։

---

* Ըստ հեքիաթասացի՝ կռապաշտների թագավոր (Ս. Բ.)։

** Ջինաստանում գարուն է եկել,
Հե՛յ, ձորի գլխին դժվար վիճակ ստեղծվեց (Ս. Կ.)։

Պառավն օր զօսկին տեսավ, էղավ աշխըրով, վազեց տուն, հոտ վըր հոտի զարկեց, զամներ չարդեց, զտղի ձին քաշեց ներս, վազեց շուկեն, առավ հաց ու խոտ, էկավ։ Կերան, խմեցին պառկան քնան։

Լուացավ, տղեն հ'էլավ, ասեց. «Հ'էլնիմ էրթամ զէդա քաղաք քիչըմ թամաշա էնիմ, հ'իդամ զիմ ձին հեծնիմ, թորկիմ էրթամ։

Հ'էլավ գնաց քաղքի մեշ, քիչըմ օլըրդավ, տեսավ շահել տղեմ՝, մեկ բոներ է մեկ ձեռք, մեկ՝ մեկ ձեռք, մեկ լէ հետևանց թուր քաշեր է կղդմեցու էդ տղի վրեն, հուր ու հաշամ թափեր է, ինք լէ հ'ընկավ էղոնց հ'ետևեն, գնաց։

Գնաց քաղքեն հ'էլավ դուրս, ժողովուրդ դարձավ, էդ իրեքն առան ղաղեն ու գացին, դերի ախպեր լէ հ'ընկավ ուրանց հ'ետեվեն։

Գացին, գացին, հ'էլան մեկ անվերի սարու մը գլուխ, հասան բանձըր քըռիմ՝ բերան, թուր բռնողն զարկեց, զէդ կտրիճի գլուխ կտրեց, մեկէլ էրկուա լէ մեկ-մեկ լանկա գլխուն ու շանդրկին զարկին, տվին պալերուց ցած ու դարձան էկան, տղեն լէ ուրանց հ'ետևեն։

Տղի նյաթ շատ ավըրվավ, թե վախեն ու թե զէդ բանն օր տեսավ։ էկավ գնաց պառվա տուն մտավ։ Պառավ զտղեն օր տեսավ, ասեց.—Տղա, հ'էսօր զքու նյաթն հ'որի՞ն իս ավրի։

Տղեն պատմեց, ասեց.—Ալուքեֆյաթ, հըմլա բանըմ տեսա։ Հ'էսօր իրեք մարդ տեսա. մեկ քաշեր էր զթուր, մեկէլ էրկուա լէ ձեռքերուց բոներ են, առան խորոտիկ տղեմ՝, տարան ֆըլան սարու գլուխ, զգլուխ զարկին, տվին քարերուց ցած ու դարձան էկան։

Պառավն ասեց.—Հե՜յ լաո՜, էդա Թելման քաղաքն է, տարին 366 մարդու գլուխ էդ հըմլա կզարկին։

Տղեն ասեց.—Նանե՜, սապապ ի՞նչ է։

Պառավն ասեց.—Մըր թագավորին ֆոզ ախչիկըմ կա, պայմանավորվեր է, որն օր էկավ զինք հանեց լեզու, զէնի առնե, որն օր չհանեց, կտանե զգլուխ կիտա զարկել, տարին էդ հըմլայով 366 կտրիճ գլուխ կուտե։

Տղեն ըսեց ուր մտքի մեջ. «Ես օր զէդի ալթ չէնիմ, լեզու չհանիմ, Տաճկա թագավորի քաղաք իսկի չըմ կռնա գործ տեսնա, ես լէ փորձըմ պիտի էնիմ, յամ զախչիկ պիտի հանիմ լեզու, առնիմ էրթամ, յամ զիմ գլուխ կիտամ զարկել, փրձնիմ ազատիմ»։

Լուսուն հ՚էլավ, յալա՜, բար տվեց գնաց շուկեն, տեսավ օր հալվորըմ խաֆրսի մեջ ճընճուղըմ դրեր է ու կոլըրցու շուկի մեջ։ Կխոսա՝ «Ճնճուղ ո՛ր կառնե, ճնճուղ ո՛ր կառնե»։

Տղեն ասեց.—Վալլա՜հի, ես զէդա ճնճուղ պիտի առնիմ։ Կանչեց. —Արո՛, արի զքու ճնճուղ ես կառնիմ։

Աբոն ասեց.—Քու տուն դո՞ր է, էրթանք քու տուն բարիշինք։ Ես հ՚ոդա չըմ իտա։

Տղեն ասեց.—Ընծիկ տուն չկա, ես խարիբ իմ։

— Հալբաթ խոնախանեմ՝ ունի՞ս։

Ասեց.—Հա՛, վալլահի, խոնախանեմ՝ ունիմ։

Առավ զտղեն ու էկավ պառվու տուն, գացին ձիու մարի վրեն նստան։

Հալվորն ասեց.—Տղա՛, զէդա ճնճուղ կիտամ քզիկ, հար ինչ օր էդ կասե քզիկ, խոսքեն չէլնիս, էնղոր խոսքով կնստիս, կտնիս, էնղոր խոսքով չնստիս՝ զարար կքաշիս,—ասեց ու հալվորն կորավ։

Հալվորն օր կորավ, ըստհաղ ճնճուղ վերուց, ասեց.—Ազնի՛վ տղա, լուսուն կէլնիս, էրթաս շուկեն, կառնիս իրիցու վերարկվի պես լեն վերարկում՝, կծալիս զվերարկուն, կդնես քու ծոցք, կէրթաս թագավորի հ՚առեջ կկանիս, հրաման կառնիս, կէրթանք ախչկա հ՚օդեն։ Յեր օր կմոտենանք ախչկա հ՚ոդի դռան, կհագնիս զքու վերարկուն, զիս քու ծոցեն կհանես, կդնիս քու թևի մեջ ու զդուռ կրանաս։

Կասիս.—Բարև քի, թագավորի ախչիկ։

Հանդե էնի զքու բարև չառնե։

Յեր օր թագավորի ախչկան բարև կիտաս, էնի զքու բարև չառնե, զթևդ կախե, ես կէրթամ գողտուտիկ, կմտնիմ դռան ճխան։ Կդառնաս կասիս. «Դուռ ախպեր, բարև քեզ». ես զքու բարև կառնիմ ու ես ինչ օր կխոսամ քզիկ հախլի լէ էղնի. դու հախսրզ շուհապ տուր։

Տղեն զվերարկուն կհագնի, զխուշ կառնե թևի մեջ, ներս կըմըտնի, զթև կկախե, ճնճուղ կէրթա, կմտնի դռան ճխան։

Կդառնա վըր ախչկան.—Բարև քի, թագավորի ախչիկ։

Թագավորի ախչիկ բարև չառնե։

Կդառնա կասե.—Դո՛ւռ ախպեր, բարև՛ քի։

Դուռ կասի.—Աստծո՛ւ բարին, Ազնիվ տղա, գլխուս ու հ՚էրե-

սիս վրա էկար դու, ափսոս չի՞ս դու էկար էդա տեխ, էդա հըմլա անդգամ ֆող ախչկա մը հետ կխոսաս։

Թագավորի ախչիկ կասե.—Ջանը՛մ, էդ ի՞նչ մարդ է, օր ընծիկ բարև տվեց չառա, դուռ ընդունեց զուր բարև, պատասխան տվեց։

Դուռ մեկ լէ կվերու կասե.—Աղնիվ տղա, դու բարով ու խերով էկար, վըր իմ աչքերուն էկար։ Նստի, հ'էսօր քզիկ բանըմ պիտի պատմիմ, տեսնամ դու կռնա՞ս, գինաս ո՞րն է հախլին, ո՞րն է հախսըզ։

Առավ ճնճուղ, ասեց.—Աղե՛կ անկաճ էրե, սորա կհարցում քինե, հախլին ո՞րն է, հախսըզ ո՞րն է։

Վերցուց ասեց.—Աղնի՛վ տղա, ժամանակին մարդում՝ մեկ ուստա կէղնի, շատ աճիզ կէղնի ուր սանյաթից, զուրաղ կզարկե պառեկ ու կընկնի ճամբախ։ Կէրթա հ'ըռաստ կիգա մարդում՝։

Մարդ կհարցու, կասե.—Ես լէ թարդի իմ, վախենամ օրըմ զարկիմ զասեղ, զաչքս հանիմ, ես լէ կիգամ։

Կէղնին հ'ընկեր, կէրթան։

Հ'ըռաստ կիգան ուրիշ մարդու մը, կասին.—Ախպե՛ր, դու հ'ո՞ւր կէրթաս։

Էն լէ կասե.—Ես կարդացվոր իմ, աճիզ-թաճիզ էղեր իմ իմ կարդալուց, կէրթամ խուրբաթ, ուրիշ սանյաթըմ կէնիմ։

Էնդոնք կասին.—Մենք լէ աճիզ-թաճիզ էղեր ինք մըր սանյաթեն, կէրթանք խուրբաթ, ուրիշ սանյաթ էնինք։

Կէղնին իրեք հ'ընկեր ու կէրթան։

Կէրթան քաղաք չըն հասնի, կմնան սար, չըն հ'իշխնա պառկի, ահով ու վախով տարի կէղնի. կրերին ուրանց նորադար կանկըցուն, կպառկին քնին, հ'առշին հեղ ուսդեն կկանի նորադար։

Ուսդեն քիչ կնշա, քիչըմ կզարթի, կտեսնա օր չէղնի, կէլնի կէրթա, կոճըմ գտնա, կընկնի վրեն, կշինե խորոտիկ ախչկա մը սուրաթ, կկանկցու ու կլըլկե ղթարղին, կասե.—Հ'էլի, ըստհաղ դոր քումն է։

Թարղին կելնի, կտեսնա օր սպիտակ բանըմ կա հ'ոդի։

— Յա՛,—կասե,—էդա գո՞ղ է, ի՞նչ է։ —Զեռք կիտա հ'ինք, կտեսնա, օր փետ է, ախչիկըմ շինուկ կանուկ է։

— Յավաշ,—կասե,—ուսդեն զուր ուսդութեն էրեր է, ես լէ զիմ ուսդութեն ցուցում, ֆըսդանըմ շինիմ հագում։

Թարգին լէ կնստի, ճրճրղլի-բրճրղլի ֆրստանըմ կշինե, հագու ու կտանե էնտեխ կանկըցու օր նաճարն էր կանկըցուցի։

Շիտակ անկաճ կէնե՞ս, Ազնի՛վ տղա։

Տղեն կասե.—Իմ ուշադրութեն քու վրեն է։

Թարգին կէրթա ըստհաղ զկարղացվորն կզարթցու ու ինք կպառկի քնի։

Տիրացուն հ'իմցավ հ'էլավ նստավ, քիչըմ էսդին ու էնդին իշքեց, զաչըվներ ճըմռեց, իշեց տեսավ էն դին բանըմ կա կանուկ, զնաց փետ խըդեց, տեսավ փետե ախչիկըմ կանուկ, ասեց.—Թարգին ու ուսդեն ին շինի։ Ես ի՞նչ էնիմ։

Առավ զուր գիրք, զնաց կանավ վըր էդ փետե ախչկա գլխուն, կարդաց ու կարդաց։

Ազոթրան բացվավ վըր հազրներուն, հոգի էկավ փետե ախչըկա մեշ, էղավ խորոտիկ ախչիկըմ, էկավ էդոնց կուշտ նստավ։

Իրեք լէ հ'իմցան հ'էլան նստան, էն ասեց՝ իմն է, էն ասեց՝ իմն է, ու բաշլամիշ էրին, զիրար զարկին։ Մարգում՝ մեկ ասեց.—Ջանը՛մ, դուք հ'ո՞րի զիրար կզարկեք, էդա տեխ քաղաք կա, հուքմ կա, գացեք, գանգատ էրեք։

Գացին գանգատ էրին, զախչիկն հասցուցին ուսդին.—Դու էղներ վի՞ր կհասցուցներ։

Տղեն ասեց.—Թարգուն։

Ախչկա փոր չտարավ.—Հա՛յ,—ասեց,—աստված ղձըր դատաստան բըլու, օր էն մարդ չէղներ, փետից ու հալվից ի՞նչ գիկեր. ախչիկն իրիցուն կհասնի,—ասեց ախչիկ։

Տղեն կեռեց զուր թև, բացեց զդուռ հ'էլավ կէրթեր։ Ճնճուղ էկավ մտավ թև, հանեց զուր վերարկուն, զարկեց հ'անթե տակ, զճնճուղ դրեց ծոցք ու գնաց. գացին թագավորին ճուհաբ տվին.—Զասե՞ս, տղեն զքու ախչիկ հանեց լեզու։

Ախչկա հարցուց, ախչիկ լէ, ասեց.—Հա՛։

Օր ասեց՝ հա։ Թագավորն ասեց.—Դրու էրկու հեղ լէ կա, վաղն ու մըկլօր լէ, թըղ հանե, լեզու առնե էրթա։

Տղին ասեց.—Էսօր գնա, լուսուն արի։

Տղեն օր գնաց, ախչիկ բերեց զդուռ քակեց, պատ շարեց տեխ, ասեց.—Էդա ի՞նչ պատ ի։ Ուրիշ տեխով դուռ բացեց։

Լուսուն տղեն հ'էլավ, հավորիքն ասեց.—Տղա՛, ախչիկ զդուռ քակեր է, վառի։ Ուրիշ տեխ է դուռ բացի։ Էն դռան տեխ լէ պատ է շարի։ Քզիկ համար աթոռքըմ ին գրած, եր գացինք դուռ, զքու

վերարկուն կհագնիս, գիս կառնիս թևի մեջ։ Ու գթևդ կցածուս, ես հ'էսօր աթոռքի տակ կէրթամ կմտնիմ։ Ախչկան բարև կիտաս։ Զառնե։ Կդառնաս աթոռքին կիտաս, ես կառնիմ, էմ լէ հ'իրկվան պես պատմութենըմ կէնիմ։ Իմալ օր հ'երեկ թարս ջուհաբ տվիր, հ'էսօր լէ հըմալ կիտաս։

Հ'էլան, դացին, գացին, թագավորից հրաման առան։

Տղեն գնաց ախչկա հ'օդեն։ Օր հասավ հ'օդի դուռ, հագավ զուր վերարկուն։ Ջենճուղն առավ թևի մեջ ու գնաց մտավ ախչկա հ'օդեն։ Աթոռք դրուկ էր, գրճավ օր կնստեր, գթև կախեց, ճնճուղ թռավ գնաց աթոռքի տակ նստավ։

— Բարև՛ քզիկ, թագավորի՛ ախչիկ,—թագավորի ախչիկ բարև կառնե՞։

Օր թագավորի ախչիկ բարև չառավ, դարձավ աթոռքին.— Բարև՛ զքզիկ, աթոռք ախպեր։

— Աստծու բարին Ազնիվ տղա,—ասեց աթոռք։

— Դու հ'երեկ չխըրատվար, մեկ լէ հ'էսօր էկար էդ անզգմի խեչ։ Էդի չամչնա, իսկի չէ՝ դու ամչցի։ Հրամեցեք, նստեք, քզիկ պատմութենըմ էնիմ, Ազնիվ տղա։

Թագավորիմ՝ մեկ կէղնի, ուրին իրեք տղա կէղնի։ Էդ իրեք տղեն լէ կէլնին զուրանց. բար կիտան, կէրթան խուրբաթ։ Թագավորին լէ շատ սերանելի խուշըմ կէղնի։

Տղեկներ կէրթան խուրբաթ, կէրթան իրեք ճամբու կհանգիպին, կասին.—Ախպըրտանք, մըր ճամբախ էղավ իրեք, կէրթանք ամեկս մեկ ճամբու հետ, կէրթանք։ Էդա տեխ մեկ-մեկ քար տընկինք, որն օր շուտ դարձավ էկավ, զուր քար կփրցու, հանդե կհասկցվի մեկէլտանք չէկած ին, թըղ էրթա զէնդոնք ա լէ առնե հ'իգա։

Ուրանց քարեր տնկին, խավլ դրին մըշ հ'իբար ու հ'ընկան ճամբախ, գացին։

Էրկու իրեք տարի ժամանակ հ'ընցավ, մեծ տղեն ասեց.— Հերիք է մնամ խուրբաթ, էրթամ զիմ ախպըրտանք գտնամ, դառնամ էրթամ իմ տուն։

Էկավ տեսավ օր ախպրտանու քարեր դրու կանուկ ին, դարձավ գնաց ախպըրտոց հ'ետև։ Գտավ զախպըրտանք, առավ էկավ։ Էկան էդ ճամբու գլուխ կանան. ասին հ'իրարու.—Ախպրտա՛նք, դուք գացիք խուրբաթ, իրեք տարի մանցիք, ի՞նչ սորվաք էկաք։

Մեծ ախպերն ասեց.—Ես աղեկ ըռամ թալել իմ սովրի, ի՞նչ տեխ բանըմ էղնի, կառնամ ըռամ թալիմ, հասկընամ, ի՞նչ է էղի, ի՞նչ է դարձի։

Միջնեկն ասեց.—Ես աղեկ տոխթորութեն իմ սովրի, չըմ գինս աստծուց էղնի, թը չէ, մահվան դուռ էղնի հիվանդ, էրկու ավուր մեջ կհանիմ, կանկըցում։

Պղտիկ ախպորն հարցուցին, ասեց.—Ես աղեկ սայի իմ, թուղթ տանող-բերող, տաս ավուր ճամբախ մեկ օր կառնամ էրթամ։ Ձաթի տաս ավուր ճամբախ էր մանցի հ'իգեն ուրանց տուն։

Մեծ ախպոր ասին.—Ըռամըմ թալ, տեսնանք ի՞նչ հալու մեջ է մըր պապ, մըր խուշն։

Էնի ըռամ թալեց, ասեց.—Փա՛ռք աստծու, մըր հոր հալն աղեկ է, բըլե մըր խուշ հիվանդ է, տարած ին թալած հ'օդի աչքունք, հար հ'իրկուն յա՛ հասնի, յա՛ չհասնի, կսատկի։

Միջնեկ ախպերն խութի մը հանեց ճիբեն, ասեց.—Խողի՛, էդա տեղ հասներ ուրեն, թալեր բերան, հայ ու հայ էր։

Պղտիկ տղեն թռուց ձեռքեն ու յա՛լա, թռավ բերեց տրորեց, լցեց խուշի բերան, սաղցավ, հ'էլավ կանավ, տասն օրե վերջ, սորա ախպըրտանք փրրթան էկան։

Էկան տուն, բռնեցին զիրարու փողպատ։ Էն ասեց՝ խուշն իմն է, էն ասեց՝ իմն է։ Ձեռքան զիրուր զարկին, դրկիցներ էկան ասին.—Ջանը՛մ, ի՞նչի վրեն զիրար կծեծիք։

Ախպըրտանք ասին.—Վըր էդա՛ հավքուն։

— Ջանը՛մ,—ասին դրկիցներ,—բիլահախ տեխ զիրար հ'ո՞րի կծեծիք, գացեք հուքմաթ, վիրն օր հասուց։

Ախպըրտանք ասին.—Աղե՛կ կասին։

Հ'էլան քշեցին, գացին հուքմաթ, պատմեցին։ Հուքմաթ հախ տեսավ ռամ թալողին։ Դու էղներ էնտեխ, վի՞ր հախ կտեսներ, Աղնիվ տղա։

Տղենն ասեց.—Տոխթորին։

Ախչկա փոր չտարավ.—Հա՛յ,—ասաց,—աստված ձըր դատաստան բըլու. օր պղտիկ տղեն չբերեր, էնդոնց բերնի՞ն էր հ'ընկի, խուշ կհասնի պղտի տղին։

Վազեցին, գացին թագավորին ասին.—Ախչիկ հ'էսօր լէ խոսաց։

Ասեց.—Թըղ էրթա, վա՛ղ հ'իգա, օր վաղ լէ խոսեցուց, թըղ առնե՝ էրթա։

Տղեն օր առավ ղուր խուշն, էկավ ուր մսաֆըրխանեն, լուսուն օր հ'էլան, խուշն ասեց.—Աղնիվ տղա, հ'էսօր թագավորի ախչիկ ինադ է Լրի, նը՛ աթոռք է թողի, նը՛ բան։ Կէրթանք մտնինք։ Կէրթաս ուր փարտի խեչ կկանիս ղթեադ կցասուս, ես կէրթամ կմտնիմ բարձի տակ, բարև կիտաս, հանդե չառնե, կդառնաս բարձին կիտաս, կառնիմ ու պատմութենմ՝ լէ հ'էսօր կէնիմ։

Տղեն ղարկեց ղուր վերարկուն հ'անթի տակ, գնաց թագավորից հրաման առավ ու քշեց ախչկա հ'օդեն։ Հ'օգի դուռ օր հասավ, հանեց զվերարկուն հագավ։

Ձենճուղն առավ թևի մեջ, գնաց, մոտեցավ փարդին ու թողեց, գնաց ճենճուղ մտավ ախչկա բարձի տակ։

— Բարև քի, թագավո՛րի ախչիկ։

Թագավորի ախչիկ ղբարև չառավ։ Օր չառավ, դարձավ վրը բարձին.—Բարև քի, բարձ ախպեր։

Բարձն ասեց.—Ասսո՛ւ բարին, Աղնիվ տղա։ Աչից, գլխու ու հ'էրեսի վրա էկար։ Ափսո՛ս, կցավամ զքզիկ. էդա էրկու հեղ է կիդաս ու էդ անդգմի հետ իմթիհան կէղնիս, կհաղթվի ու դու նորեն էկեր իս էդ անդգմի հետ կընկնիս կէլնիս։ Հրամե՛, նստի, առակըմ լէ հ'էսօր պատմիմ քզիկ։

Տղեն նստավ ու ըսրձ առավ, ասեց. —Աղնի՛վ տղա, մըր քաղքի մեջ դեղրարըմ կեր։ Ուրին կեր կնիկըմ ու մշակըմ։ Իմաղ էղավ էդ դեղրարն էր օր մեռավ, կնիկն ասեց մըշկուն.—Թոպըմ կտավ փաթիս քի, էրթաս պառկիս գերեզմներ, հ'էլնիս լուսումն հ'իգաս, կառնիմ զքզիկ։

Էդ մշկուն լէ էրկու ախպեր կեր, մեկ՝ նոպատար էր քաղքին, մեկ լէ՝ ըռընճբար։

Մշակ հ'էլավ, առավ թոպըմ կտավ, փաթեց հ'ինք ու գնաց գերեզմներ, քարերու մեջ պառկավ։ Պառկավ քարերու մեջ չուրի աղոթըրնին։ Չէ էդոր ըռընճբար ախպեր շուտ կէլնի, լուծք լծէ, կէրթա հ'արտ։ Լծեց զլուծք, գնաց տեսավ օր սպիտակ փաթուկ մարդըմ պառկուկ է գերեզմներու քարերու մեջ, վախեցավ, լրոլրղաց, նոպատար վազեց էկավ։

Ասեց.—Ախպե՛ր, ի՞նչ է էղի։

Ասեց.—Ջրս տեսնա՞, հէնա սպիտակ շորերով մարդ, պառկուկ է մըշ գերեզմնի քարերուն, տեսա, ասի՝ էդ ի՞նչ էր հ'էլավ գերեզմներու միջեն, գոռնափշտի՞կ է, ի՞նչ է, վախեցա, լրզլրղացի։

Նոպատար ախպեր զէդ օր լսեց, զթրֆանք լցեց ու հասավ սպիտակ հալվրներով մարդ։ Մարդն շուտ թռավ հ'էլավ հ'առեշ կանավ, ասեց.—Ցամա՜ն, չզարկիս, ես քու մշակ ախպերն իմ, ասու սիրուն էղնի։

Ախպերն ասեց.—Հ'որի՞ն իս էկի, պառկի հ'ոդա։

Մշակն ասեց.—Ալ ու քեֆյաթ հրմլա է էղի։ Էկեր իմ պառկի։

Նոպատարն ասեց.—Օր հրմալ է, էդ կնիկ ես կառնիմ։

Ըռընճպար ախպերն ասեց.—Չէ՜, հախն իմն է, հ'ախու ես կտրեր իմ։ Խոսքըմ էնդորնէ մեկ էնդորնէ, դրրբ դրին հ'իրար։

Թափան էկան, ասին.—Ջանը՜մ, հ'ո՞րի կծեծեք զիրար։ Էդա տեխ հուքմաթ կա, բան կա, գացեք հուքմաթ։

Քաշկռնեցին զիրար, գացին հուքմաթ, հուքմաթն հասուց ըռընճբրին։ —Աղնիվ տղա, դու հոն էղներ վիր կհասուցներ։

Տղեն ասեց.—Ըռընճբրին։

Ախչիկն սիրտ չտարավ, ասեց.—Հա՜յ, աստված զքու դատաստան բըլու, էն մարդ առեր է զուր արունք ուր աչք, գացեր է պառկի գերեզմներ, զկնիկ կհասնի ըռընճբրի՞ն, կնիկ մշա՜կ ախպոր կհասներ։

Գացին ասին թագավորին.—Քու ախչիկ հ'էսօր լէ խաբվավ։

Ախչիկն է օր խաբվավ՝ խոսաց, հանեց զմատնեք, տվեց տղին։

Թագավոր լէ զուր թագ դրեց տղի գլուխ։ Տղեն ասեց.—Թագավո՜ր ապրած, քու թագ քզիկ բունբարաք էղնի, ընծիկ մարամ կա, էրթամ հանիմ սրտես հ'իգամ, սորա պսակվիմ քու ախչկա հետ։

Ախչիկն ասեց.—Ի՞նչ մարամ է։

Տղեն ասեց.—Պիտի էրթամ Տաճկաց թագավորի վրեն կռիվ էնիմ, առնիմ զէնդոր ախչիկ, հ'իգամ։

Ախչիկն ասեց.—Էնի իմ հոխպերն, ախչիկ լէ իմ հոխպոր ախչիկն է, չաթին է, ընծիկ օր կլսիս՝ շրս էրթա, կէրթաս՝ աստված քու հետ էղնի։

Ֆախաթ խուշ էն վախտ օր ախչիկ զմատնեք տվեց, էլ չերևցավ, համբարձավ հ'էրկինք։

Պառկան, քնան, զուրանց ուրախութեն էրին։ Լուսուն հ'էլավ, բարեմնաց էղավ ախչկաց, հեծավ զուր ձին ու հ'ընկավ ճամբախ։ Շատ գնաց, քիչ գնաց, դաշտի մեշ շրհորըմ կեր, քշեց գնաց էդ շրհորի վրեն հ'իջավ։

Հ՚իջավ ըսեց.—Պետք է քիչըմ ջուր քաշիմ, խմցում իմ ձիուն ու ըռհաթիմ, հեծնիմ էրթամ։

Կապեց ղքուլակ չվան, հ՚իջուց, տե՛, տե՛, քաշեց հանեց, տեսավ ծանտր մարդըմ գլխըվեր կախուկ էր ջրհորի մեջ ու օտներ կապուկ էր շըրիդ։ Քաշեց, հանեց դուրս, տեսավ օր ծանտր կտքեր։

Չէ օր դրի միջեն հանեց, զանուն դրեց Գրի ախպեր.—Դու ի՞նչ մարդ իս։

Մարդն ասեց.—Էդա քսանհինգ օր ես կախուկ իմ ջրի մեջ։ Խելք չմանցեր է գլուխս։ Կըռնա՞ս քիչըմ հաց տուր ուտիմ։ Քիչըմ լէ ջուր քաշե խմիմ, խելքս հ՚իդա գլուխս, զիմ գլխու գալած թարիֆ էնիմ։

Տեսավ օր էդ հորու ջուր պխտոր էր։ Հ՚էլավ առավ զմարդ ուր թարկին, քշեց գնաց, ծառի տակ հ՚իջավ։ Հ՚ազրուրըմ կեր, զձին կապեց ծառ ու նստավ հ՚ազբրի վրեն։

Հանեց հաց կերցուց էդ մարդուն, ջուր խմցուց, նոր խելք էկավ գլուխ, բաշլամիշ էրեց զուր գլխու գալած նախլ պատմիլ։

Գրի ախպերն ասեց.—Դու զէն մ՚ասի, քու անուն ի՞նչ է։

Տղեն ասեց.—Իմ անուն Ազնիվ տղա է։

Աղնիվ տղա,—ասեց Գրնեցի ախպեր,—իմ գլխու գալած ջատ է, անկաճ էրե պատմիմ։

Ասեց.—Մի թագավորի տղա իմ, իմ պապ թագավոր էր, հ՚ըմեն տարի իմ մամ կէրկուհոգովներ, ախչիկ կբերեր, իմ պապ ինատ կէներ, զախչկա գլուխ կզարկեր։

Հ՚էս տարի լէ իմ մամ էրկուհոգովցավ, ասեց.—Լառ՚, գնա զքզիկ թալ քու պապու օտաց վրեն, բալքիմ զիմ ճժու գլուխ չզարկե։ Ես լէ գացի խնդրվա, իմ պապ ասեց, թե օր տղա էղավ, էդա տեխ կմնաս, զաթի բան չըմ ասի, թե օր ախչիկ էղավ՝ կառնես ու հեռենաս։

Էղավ օր իմ մամ պառկավ։ Ախչիկ բերեց, պըլըլեցի, էրի խոնտախ, առա ու զիմ բար տվի սարվըներ։ Գացի սար, տրսնուհինգ տարի պահի զէդ ախչիկ։ Հովըվներուց կաթ գնի կերցուցի, հար էղավ տրսնուհինգ տարեկան ախչիկ։ Օրըմ հ՚էլա գացի նեճրութենի, ձիավորըմ կիգա էն հ՚էրի դռնով, օր ես ու իմ քուր կըմնեք, կընցնի, ախչիկ կէլնի զգլուխ կթալե դուրս. «Էջ՚, ձիավոր, չասիս էդ տեխ մարդ կա, բան կա, հ՚ո՞ւր հըմլա դասթուրսըզ կընցնիս կէրթաս։ Էկո՛ հ՚իջի՛, ըրրգուճըմ հաց կի, հ՚ընցի՛ գնա»։

Կբերե զմարդ կիջու, կուտին, կխմին ու հ'իրարու հետ աղեկըմ զուրանց մապեն տուզմիշ կէնին, կբերե զձին տեխըմ կպահե։

Հ իրկուն ես կիզենք, կվերցներ զտղեն կպահեր, ես օր կէրթենք, կհաներ բերեր, հար հ'իրկուն ուրանց քեֆ ուրախութին կէնեն։ Քսան օր էդ, քյազալըք, հ'իրարու հետ կապրին։ Ախչիկ կասե. «Էդ հըմլա չէզնի, հ'ըմնօր մըր ախպեր էրթա հ'իգա, մինք հըմլա գողտուկ զիրար չվայելինք, չէզնի։ Դու պետք է զիմ ախպեր կորցուս, օր հ'իրարու հետ սարբաստ նստինք ու կանինք»։ Օրըմ հ'իրկուն դարցա նեճրութենեն էկա։ Հաց կերա, պառկա, տեսա բոռալու ձենըմ էկավ։ Թիք հ'էլա իմ տեխի մեջ նստա։ Նստա, տեսա, օր իմ էրկու բութ անղանլարով քիփըմ կապած ին իրար։ Իմ քուր վերուց ասեց. «Կտրի՛ճ, դը զա՛րկ զգլուխ կտրե, տանեք թաղենք։ Հ'իգանք սարբաստ ղմըր քեֆ էնինք»։ Տղեն ասեց. «Ախչի՛, վալլահի իմ ձեռք չբռնե։ Չէգոր գլուխ զարկեմ, ափսոս չէ՞, մարդ հըմլա բաբաիկիթ մարդու գլուխ իմա՞լ կղարկե»։ Օր տղեն հըմալ ասեց, իմ քուր զէրկու մատ խըռըսկեց իմ աչքերու մեջ, հանեց ու բերին էդա տեխ։ Զվնից զգլուխս, դարձուցին ցած, կապեցին, թողին գացին, էդա քսանուհինգ օր էդ-տեխեն կախուկ իմ։

Աղնիվ տղեն վերուց ասեց.— Տնավե՛ր, չասի՞ս օր քու դարդ իմ դարդից ծանտր է էղի։

— Ջրս ավտընա էդա լէ իմ աչքերն է, հանդե թալուկ իմ ճեր. —հանեց դրեց տղի ձեռք։

— Վա՛յ, աստված զքու տուն շինե, թե իմ դարտ մեկ էր, դու օր զքում պատմիր, էղավ հազար ու մեկ։ Կյալո՛, դու գինաս որ մեկ դինէ էնդոնց տուն էրթանք զէրկուսի գլուխ լէ կտրինք, օր մըր սիրտ ըռհաթի։

Գբի ախպերն ասեց.—Ես քոռմ' իմ էղի, իմ հալի հետ, ի՞նչ գինամ ի՞նչ դինէ, լախա չունիս, ես քոռըմ, իմ ձեռքեն բան չի գա, իմ սապրպուն հ'որի՞ հ'ընկնիս կրակի մեջ, թողենք էրթանք մըր ճամբու հետ։

Աղնիվ տղեն ասեց.—Խոզի դու իսկի խըսա չըր էրի, իմ սիրտ էղավ հազար ճուղ, ես օր զիմ գլուխ չդնիմ, քըրպես կպատռիմ։

Քաշեց զուր կուլապ ուր գլուխ, ու պառկավ վըր հ'աղբրին, քնավ։ Գբի ախպերն էլ նստավ ու տուշումմիշ էղավ, թե էդ ի՞նչ էր էկավ իմ գլուխ։ Մեկ լէ տեսավ էրկու հավորիկ զուրանց թևեր թափթփին ու նստան ծառու վրեն ու բուշլանմիշ էրին հ'իրարու հետ

խոսացին. «Էրանեկ թե էդա քոռ տղեն հեշար էղներ, հասկներ մենք ինչ կասենք, զուր աչքեր լվեր էդա հ'աղբրի մեջ ու զմբր թեբուր դներ վրը ուր աչքերուն, կսաղներ, կէղներ հ'ավալկու աչվեր»։

Ասին ու թռան դացին. օր թռան գացին, զԱղնիվ տղեն զարթեցուց, ասեց.—Հ'էլի՛, ավեր բան աստված կշինե։ Դու քնուկ էր, էրկու հավք էկան վրը էդա ծառին նստան, ասին. «Խոզի էդա տղեն արթուն էղներ լսեր մենք ինչ կասենք, զուր աչվեր լվաներ էդա հ'աղբրի ջրով ու զմբր թեբուր կապեր վրը աչքերուն, կսաղներ»։

Աղնիվ տղեն հ'էլավ իշքեց օր թեբուր պատուկ էր ծառու տակ։

Ասեց.—Գբնեցի ախպեր, քու աչքեր քու մո՞տն է։

Ասեց.—Հա՛,—հանեց տվեց։ Տղեն բերեց լվաց-լվաց, մեկ-մեկ կաթ ջուր կաթեցուց աչքերու մեջ ու աչվեր դրեց վրեն, զթեբուր բերեց յաղմովըմ կապեց, քաջեց զուր կուլապ ուր գլուխ, պառկավ քնավ։ Գրի ախպերն էլ քնավ։ Սահաթի մը չափ քնավ, համբերութեն կա՞, հ'էլավ զձեռք թալեց յաղմեն, շոռբեց բերեց ցած, տեսավ օր ուր աչվեր հ'ավալկու աչքերու պես սաղ ին, մենակ աջ ու ձախ է էկի։

Աղնիվ տղեն լէ հ'էլավ, ասեց.—Գբնեցի ախպեր, աստված զքու մարամ կատարեց։ Հ'էլի հեծի զձին, էրթանք տեսնանք քու քուրն ու էրիկ դո՞բ ին։

Հ'էլան հեծան զձին ու զուրանց բար տվին գացին, դե հ'ոդա, հ'ոնա, տրսնուհինգ ավուր էկան հ'էլան քուրոջ հ'էրի դուռ դուրս։

Էհ, մտան ներս, տեսան օր ախչիկ նստեր է կլուլիկ կշիքե, զատ կէփե, մարդ լէ զօջախ կվառե։

Աղնիվ տղեն ասեց.—Գբնեցի՛ ախպեր, զճետ զարկիմ, չէ՝ զվառեկ։

Զգբնեցի ախպերն ասեց.—Ճետ ընծիկ բան չէրեր է, ճետ օր չէղներ, զիս կմորթեն, ես հյուվի կէնիմ օր ճետուն բան չասիս, ինչ օր էրեր է ընծիկ, վառեկն է էրի։

Բռնեց զվառեկի* գլուխ մարմնեց, ջանդակ թռավ հ'ընկավ էնդին, գլուխ մնաց ձեռք, բերեց աղեկըմ մանդրեց, էրեց թուքուն, տարավ հորեց։

Ախչիկն օր մորթեց խըլըսավ, տղին ասին.—Հ'ուրվեր էկեր իս, մեկ լէ էնդիով թող գնա քու տուն։

---

* Աղչկա (Ծ. Բ.)։

Տղեն թողեց գնաց, քաշեցին զէգոր ձին դուրս։ Գբնեցի ախպերն հեծավ, Աղնիվ տղեն լէ հեծավ զուր ձին ու հ՝ընկավ ճամբախ։ Տասնուհինգ օր էկան, էկան ուրանց հոր հասան, ինչ տեխեն օր Գբնեցի ախպերն էր հանի։ Էկան ուրանց հորու բերան. Գբնեցին մատնվավ Աղնիվ տղեն.—Իլա՜յի, կիգաս էրթանք մըր տուն։

Աղնիվ տղեն ասեց.—Չէ՛, ախպեր, իմ հ՝առջև ճամբախ կա, դու գնա, աստված քու հետ էղնի, թե օր դարձա սալամաթ, էրկու իրեք օր քզիկ մսաֆըր կէղնիմ, թե օր չդառցա՝ դու էլ գանգատ մ՝էնի։

Էդ տեխ բաժնվան, բարեմնաց էղան հ՝իրարուց. Գբնեցին գնաց ուր տուն։

Աղնիվ տղեն տվից զճամբախ հ՝առեջ։ Գնաց, ջատ գնաց, քիչ գնաց, հ՝ըռաստ էկավ գոլի մը. տեսավ օր հավորիքըմ կեր, անուն անգղ էր, զկտուց զարկեր էր էդ գոլի մեջ ու գոլ պաղեր էր, էկի հ՝իբար, անգղի կտուց մանցեր էր մեջ, ղթևեր թափ կիտեր վըր պաղին, կէներ ու չէներ, չէր կըռնար հաներ։

Ասեց.—Վալլա՜հի, ես զըմեն բան չըմ հ՝ընցուցեր ի, զէդա լէ չըմ հ՝ընցու։ Հ՝ընցավ վըր պաղին, ջարդեց, էկավ անգղի խեչ, զկտուց հանեց, գրկեց բերեց դրեց վըր հողին։ Օր դրեց վըր հողին, հավորիքն նաֆաս առավ, ըռհաթավ, ասեց.—Տղա՜, ախր դու զէդա բարիք էրիր ընծիկ, առ զիմ թեբուր, դիր քու ճեբ։ Նեղության մեջ օր հ՝ընկար, զարկ կրակ, ես կիգամ կհասնիմ քզիկ։

Առավ ղթեբուր, դրեց ծոցք, հեծավ զուր ձին ու մեկ լէ հ՝ընկավ ճամբախ ու գնաց, գնաց բանձըր սարում տրկով կընցներ, տեսավ օր մայմուն մը կխածե զուր ձագեր, հանե սարու գլուխ կդնե ու կդառնա կիգա զմեկել կտանե, հար զմեկ կտանե, կիգա մեկելի վրեն, սարու գլխուն կգլորվի կիգա ցած։

Ասեց. «Խրար էղնի, չուրի զէդա մեյմունի ձգեր չհանիմ սարու գլուխ, չէրթամ»։ Հ՝իջավ ձիուց, ժողվեց զձգեր, զարկեց վըր սրտին ու քշեց հ՝էլավ սարու գլուխ, մայմուն լէ հ՝ետևեն։

Մայմուն ասեց. «Տղա՜, մադամ օր դու զէդա աղեկութեն էրիր ընծիկ, առ իմ բրդեն քիչըմ դիր քու ծոցք, ես ի՞նչ գինամ, վախտ է, կիգաս մեջի մեջ, նեղութենի մեջ կընկնես, կզարկիս կրակ, ես կիգամ կհասնիմ, աղեկութենմ՝ լէ ես կէնիմ»։

Քիչ մը բուրդ լէ մայմունից առավ, դրեց ծոցք։ Աղնիվ տղեն հեքիաթի անկաճ էնողներուն ասեց.—Ախպըրտանք, չզարմանաք

թե մայմուն իմա՞լ խոսաց, բաղամու էշ իմա՞լ լեզու հ՚էլավ, բաղամու տակ խոսաց։ Աստվածակուռ կողմանե էր, մայմուն լէ էն հրմալ լեզու հ՚էլավ խոսաց։ Զբուրդն օր առա, հ՚էլա հեծա զիմ ձին ու հ՚ընկա ճամբախ, գացի։ Գացի պիտ էրթենք Տաճկաց թագավորի քաղաք, ծով էր էդ քաղքի հ՚առեջ։ Տեսա օր տաղլեն զարկեր է մեծ ձուկրմ տվեր է հ՚առեջ, կլրպրտի չկառնա զինք թալե ջրի մեջ։ Հ՚իջա ձիուց, ղպառեկս զարկի ձրկան պառեկին ու հրլոնտեցի-հրլոնտեցի, գնաց պատավ ծովու մեջ. օր պատավ ծովու մեջ, ձուկն ասեց. «Ա՜խր, դու զէդա աղեկութեն էրիր ընծիկ, ա՜ռ զէդա թեփ, դիր քու ծոցք, ես ի՞նչ գինամ, վախտ կէղնի օր հ՚իգաս ծովու պռուկ, նեղութենի մեջ էղնիս, կզարկիս կրակ, ես կիգամ կհանիմ»։

Զուկ մտավ մրջ ծովուն։ Առավ զթեփ ու հ՚ընցավ գնաց Տաճկաց թագավորի քաղաք։ Գնաց ախչկա մոտ հ՚էլավ դուրս։

Ախչիկն օր ղտղեն տեսավ, ասեց.—Բարով էկար ղու տղա։

Զհրոխպոր ախչկա մատնեք լէ տեսավ մատ։

Ասեց.—Տղա՜, դու էկեր իս հիս հ՚ապով, ըման ինչ էնիմ, չաթին է։

Առավ ղտղեն, գնաց ուր հ՚օդեն։ Օր տարավ ուր հ՚օդեն, դուռրմ ցուցուց, ասեց.—Քաշե ղէդա սուրմեն։

Տղեն քաշեց, ի՞նչ տեսնա աղեկ է։ Տեսավ օր հարիր հազարավոր ջանդակ էդ տեխ թափուկ ին, հ՚ըմնու գլուխ կտրուկ ու հ՚ընկուկ ին գետին։

Օր տեսավ, ախչիկն, ասեց.—Տղա՜, որն օր էկեր է, ընձիկ իմ հետ փորձվեր է, հաղթվեր է ու զգլուխ տվեր իմ զարկել։ Կէղնի իսա դու ափսոս իս, էկո թող դարձի գնա, իմ հետ մը հակաճառվի։ Զգլուխդ դուրս կիտաս։

Տղեն ասեց.—Անկարելի՜ բան է, ես էկեր իմ օր քու հետ հակաճառվիմ, առնիմ զքզիկ էրթամ, իմ բարեբարի հրաման էդ հրմալ է։

Ախչիկն ասեց.—Մադամ օր հրմալ է, իմ հակաճառվիլն հրմլա է։ Իրեք հեղ կպատվրտինք. կուզիս դու պատվրտի, կուզիս ես կպատվրտիմ, որն օր զվոր հանեց, էնի էղնի հաղթող։

Տղեն ասեց.—Քու քեֆ գինա, դը պատվրտի։

Տղեն հ՚էլավ ախչկա հ՚օդից, գնաց օլրրտավ քաղքի մեջ։ Քաղքի ճոթ խանրմ գտավ, գնաց սնդուկ մտավ. էդոնց պայման լէ մեկ սահաթ էր։ Սահաթն օր խրլրսավ, տղեն հ՚էլավ էկավ։ Հ՚էլավ



22—276

էկավ։ Ախչիկն ասեց.—Էդի հեչ, գացիր տնե տուն։ Ֆըլան տեխ, բացիր զանդուկ, մտար մեջ, հ'էլար էկար, էդի հե՛չ։

Տղեն մեկ լէ գնաց, գնաց հ'իջավ ծովու քընար, հանեց զքարու չախմախ։ Զարկեց կրակ ու զձկան թեփ տվեց կրակ, ձուկն էկավ։

Ասեց.—Ի՞նչ է, տղա։

Տղեն ասեց.—Կառնա՞ս մեկ սահաթ զիս քու փորու մեջ պահես։

Ձուկն ասեց.—Հա՛յ, հա՛յ։

Կըլուց։ Սահաթն օր թըմավ, հ'էլավ ծովու պռուկ, թըքուց, տղեն հ'էլավ էկավ։

Ախչիկն ասեց.—Տղա՛, էդ լէ հե՛չ։ Գացիր ծովու պռուկ, մտար ձկան փոր, ձուկ սահաթըմ պահեց, հ'էլավ ծովու քենար, թքուց, հ'էլտր էկար, էդ լէ հե՛չ։

Տղին մնաց մեկ ճար։ Հ'էլավ զուր բար տվեց։ Գնաց սար, մեշի մեջ։ Հանեց զմայմունի բուրդ տվեց կրակ։ Մայմուն էկավ։

Ասեց.—Տղա՛, ի՞նչ է։

Տղեն ասեց.—Կառնաս զիս սահաթըմ պահիս։

Մայմունն ասեց.—Հա՛յ, հա՛յ։

Առավ գնաց մեջի մեջ փըտոտըմ գտավ, բերեց զտղեն, մտուց փտոտի մեջ ու զհ'ոռ զարկեց վրեն։

Չէ, մայմունի հ'ոռու վրեն սեր, կապս բան չբանի։ Ախչիկ հ'ուրվեր թալեց, չկոցավ գտներ, թե ի՞նչ է տղի կեցած դուռ։ Կեցավ փետի մեջ է, բըլե ի՞նչ էր ուր դուռ, չհանեց։

Սահաթն օր թըմավ հ'էլավ տղեն էկավ։

Ախչիկն ասեց.—Դու ալթ էրիր զիս, հասկցա քու տեխ փըտոտ մըն էր բըլե ի՞նչ էր քու դուռ չկոցա հանենք։

Կցավամ օր դու ուխտ իս էրի, զիս քզիկ չըս տանի, ուրիշին կտանիս, բըլե հոգ չէ, ճամբու հետ օր էկեր իս դու անգղմ իս ազատի, թեբուրմ է տվի քզիկ, զէդ թեբուր տուր ընծիկ։

Զթեբուրն առավ տզից, գնաց ուր բաղչի մեջ էդտեխ, քանիմ' ծունտր աղոթք էրեց, ու անգղի թեբուր տվեց կրակ, անգղ էկավ։ Էկավ ասեց.—Ախչի՛, ի՞նչ ասելիք ունիս։

Ախչիկն ասեց.—Ֆըլան տղեն քզիկ ճամբու հետ աղեկութենմ' էրի, դու լէ զէդա թեբուրն իս տվի ուրին, օր նեղութենի մեջ հ'ընկնի, զարկե կրակ, հ'իգաս հասնիս։

Անգղն ասեց.—Հա՛։

Օր ասեց՝ հա.—Հըմկա՜ քինե բանըմ կուզիմ օր էնիս. զէդա շուշեն կկապիմ քու վիզ, կէրթաս էդա շուշով անմահութենի ջուր կբերիս։

Հավքն ասեց.—Զաթին բան ասիր, ման ի՞նչ էնիմ, խոսք իմ տվի։

Ախչիկն բերեց ղշուշեն կապեց անգղի վիզ ու անգղն թըռավ գնաց։ Գնաց անմահութենի հ՚աղբրի վրեն հ՚իջավ ու զգլուխ չքցուց մըջ հ՚աղբրին, զշուշեն լցեց ու իրեք օր սորա թռավ էկավ, տեսավ օր ախչիկ դյդ ջղոթք կէներ բաղչի մեջ։ Բերեց տվեց ախչիկ։

Ախչիկ առավ ղշուշեն, աղեկ տեխըմ պահեց ու դառցավ էկավ։

Էկավ ասեց.—Տղա, էլ հերիք է, հ՚էլնիք էրթանք։

Չէ օր թագավոր լէ մեռեր էր, ուրիշ ավլատ-թավլատ չկեր, ինչ օր կեր, հասավ էդ ախչիկ, ես ի՞նչ գինամ ի՞նչ բառցան, բառցան ու հ՚ընկան ճամբախ էկան, էկան հասան Գընեցու քաղաք։ Զմոռանանք, որ զշուշեն լէ գնաց ախչիկ հանեց բաղչից, դրեց ուր ծոցք ու առավ էկավ. տղեն խարար չուներ։

Գընեցին է, տեսավ օր Ազնիվ տղեն էկավ, էղավ աշխրքով, բերեց հ՚իջուց, իրեք օր պահեց, ախչիկ ինչքան մալ օր ուր հոր անեն էր բերի, էն խրդար լէ Գընեցին բռնեց դրեց տղի հետ։

Իրեք օր վերջ հոգուց լէ բարձան հ՚ընկան ճամբախ, էկան Թելման քաղաք հ՚էլան դուրս։

Թելման թագավորը չէ օր զուր թագավորութենի կես խոսք էր տվի տղին, բերեց բռնեց ու զուր ախչիկ դրեց տղի հետ։

Ազնիվ տղեն է, առավ զԹելման թագավորի ու Տաճկաց թագավորի ախչիկներ ու հ՚ընկավ ճամբախ։ Հ՚ընկան ճամբախ, թե ամիսըմ, թե էրկուս էկան, էկան մոտեցան ուրանց քաղքին։

Ջուհաբ գնաց Ազնիվ տղին*, թե չասիս, քու Գերին էկավ, թագավորական թաճ ուր գլուխ, էրկու խորոտիկ ախչիկ հետ ու բաղըրկան լէ հ՚ետև։

Ազնիվ տղեն զէդ օր լսեց, կանչեց զուր համամճին, մեկ էլ կողմե ղքաղքցիկ զըմեն հանեց, ասեց.—Գացե՛ք Գերու հ՚առեջ ու համամճուն թամբիհ էրեց։ Ասեց.—Համամճի՜, քառսուն օսկի կիտամ քզիկ, եբ Գերին կիգա կլողկնա, կէլնի ջրի մեջեն, հոտըմ կրակ կէնիս, վրեն զեհիր կըլնաս տանիս, դնիս ուր հ՚առեջ. օր ասեց էդ ի՞նչ է, կասիս՝ իմ աղի թանբին հըմլա է, ինչ խրդար

* Իմա՝ գերի տղան (Ծ. Բ.)։

մեծ մարդ կիգա կլոզկընա, կէլնի ջրի մեջեն, ասլի բանգ կտանիս հ՚առեջ կծխիս, օր անուշ հոտ առնե։

Քաղաք քաղքով գացին Գերու հ՚առեջ։ Աղնիվ տղեն լէ հ՚էլավ գնաց։ Բերեց զթագ հ՚իջուց ուր գլխեն, գրեց Աղնիվ տղի գլուխ, էկավ հ՚իջավ։ Հ՚իջավ, զախչկներ ճամբեց ուր հ՚օղեն, զԳերին լէ առավ գնաց ուրիշ հ՚օգե մը։ Օր առավ գնաց, կանչեց զհամամճին, համամճին էկավ։

Ասեց.—Կառնես զԳերի տղեն, կէրթաս համամ։ Հըմալ կլըվքիս, սապոնիս օր իսկի չէղեր է։ Առավ համամճին զԳերին գնաց, մտավ համամ։ Աղնիվ տղեն գիներ օր Գերի տղեն խերն հաղ կըմեռնի։

Կանչեց զնաճարն ասեց.—Հըմալ թաբութըմ կշինես օր իսկի չէղեր է։

Նաճար շինեց զթաբութ, առավ էկավ։

Գերին լողկըցավ, հ՚էլավ, նստավ ուր տեխի վրեն, չայըմ խմեց։ Չայն օր խմեց խըլըսավ, համամճին բերեց կեցքըմ զեհիր լցեց վըր կրակին։

Գերին հարցուց, ասեց.—Էդ ի՞նչ է։

Համամճին ասեց.—Ասլի բանդ է, Աղնիվ տղի հրաման է, օր ուրեն ինչխդար պատվով մսաֆըր կիգա կլոզկընա կելնի, հ՚առչև ծխինք։ Բերեց զդուռ փակեց ու հ՚էլավ դուրս։

Սահաթե մը վերջ, գացին, իշքին օր տղեն մեռեր է։ Էկան։ Աղնիվ տղին հ՚իմաց տվին.—Չասիս օր Գերին մեռեր է։

Ջուհաբ տվեց.—Թաբութ բերեք տանեք հորինք, ի՞նչ էնինք։

Ախչիկներուն լէ շուհար գնաց, թե՝ «Զձզիկ բերող տղեն մեռեր է»։

Ախչիկներ շատ խնդրեցին Աղնիվ տղից, թե մենք իրեք ամիս ճամբա ինք էկի էդ տղի հետ, հ՚իրարու հետ հաց ու շուր ինք կերի։ Էրթանք զուր շանդակ տեսնանք։ Սորա թըղ տանին պահին։

Հրաման էրեց.—Թըղ էրթան, ինչ զարար կա։

Հ՚էլավ Տաճկաց թագավորի ախչիկ, զանմահութենի շրի շուշեն դրեց ծոցք, առավ զթելման թագավորի ախչիկն ու գնաց մտավ համամ։

Գացին տեսան օր օղորդ՝ մարդ մեռեր է. փակեցին զդուռ ու էրկուս մեկտեղ կանան հսկում էրին ու աղոթեցին, սահաթըմ աղոթեցին։

Սահաթըմ օր աղոթեցին, հանեց Տաճկաց թագավորի ախչիկ շուշեն ուր ճիպեն, էրկու կաթ օր կաթեցուց տղի բերան, գըռ հոգին էկավ հ'ինք, տղեն հ'էլավ նստավ։

Տաճկաց թագավորի ախչիկն ասեց.—Տղա՛, դու ուխտ էրէրի օր ղքու գլխու գալած մարդու չասեր, դու մեռար ու դառձար հ'արար, հ'էլի էրթանք ղքու գլխու գալած պատմե։ Հերիք է էդ շան լակոտ հըմլա խաղա քու գլուխ։ Էդոնք օր էդ տեխն են, Աղնիվ տղեն ճամբեց։ Ասեց.—Գացեք տեսեք ախչկներ ի՞նչ կէնին։

Չէ՞ սահաթըմ էր մոֆուլ տվի։

Ջաշուռներ էկան տեսան օր տղեն ղարթեր է հ'էլի, ախչկներու հետ կխոսա։

Դարձան էկան ասին.—Վալլա՜հի, տղեն հ'արեր է հ'էլի ախչկներու հետ հանդե մժուլի կէնե։

Օր ասին, Աղնիվ տղեն ղգլուխ հանեց փանշարից դուրս ու ղինք թալեց վըր սալերուն, էղավ հազար կտոր։ Ժողվեցին լցին մըշ թաբութին, տարան շընթըռկցուցին։

Աֆանդըմ, ղէն օր շընթըռկցուցին, ախչկներ առան ղտղեն, հ'էլան համամից դուրս, բերին յոթն օր ու յոթ գիշեր հաբսնեք բըռնին ղարկին ու խաղցան։ Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։

Հարսնեք օր ֆրղավ-խըլըսավ, նոր ժողվեց ղուր քաղքցիք ու ուր գլխու գալած պատմեց, հասկցուց։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։